ՎԱՐԴՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
VARDUHI STEPANYAN

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ Վ. ՔԱՉԱՅԻ «ԹՈՂԵՔ ՄԵՌՆԵՆ» ԷՍՍԵՈՒՄ

Մեծ հումանիստ Վ. Քաչայի նախընտրած թեմաներից է եղել մահվան խնդիրը: Կյանքի և մահվան հակասությունից ծնված տասնյակ տարիների ստեղծագործական խորհրդածությունները հեղինակը համախմբել է 1972 թ. Փարիզում գրված «Թողեք մեռնեն» (*«Laissez mourir les autres»*) բազմաբովանդակ վերնագրով էսսեում: Այս էսսեում Վ. Քաչան ի մի է բերում արվեստագետ-քաղաքացու իր դիրքորոշումը մահվան պրոբլեմի նկատմամբ, իսկ տեսական հարցադրումները աղերսվում են էքզիստենցիալիզմի որոշ հիմնադրույթների հետ (տագնապ, սարսափ, մահ...): Այս ստեղծագործության չարագուշակ թվացող վերնագիրն իրականում ի հայտ է բերում հեղինակի մարդասիրությունն ու կյանքին անսպառ նվիրվածությունը:

Վ. Քաչայի ազատ ու անկաշկանդ, լավատես ու գիտակից վերաբերմունքը մահվան խնդրին հիշեցնում է Մ. Մոնտենի դիրքորոշումը. «Ինչպես մեր ծնունդն է ծնունդ տալիս մեզ շրջապատող ամեն ինչին, այնպես էլ մեր մահը կլինի վախճանը մեզ շրջապատող ամեն ինչի: Ուստի ողբալ այն բանի համար, որ մենք մի հարյուր տարի հետո չենք լինի այլևս, նույնքան անմտություն է, որքան այն բանի համար, որ դրանից հարյուր տարի առաջ էլ չենք եղել»:[1]

Դարեր շարունակ մահվան պրոբլեմը մշտապես քննարկվել է թե հոգեբանների, թե գրողների և թե փիլիսոփաների կողմից, մասնավորապես էքզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ մահվան պրոբլեմը կենտրոնական տեղ է գրավում: Մահվան առեղծվածը անսպառ նյութ է նաև առօրյա խորհրդածությունների համար: Մահը մարդկային կյանքի անբաժանելի կողմն է: Այդ առեղծվածային և սարսափազդու երևույթի նկատմամբ խոր հետաքրքրություն են ցուցաբերում փիլիսոփայական և հոգեբանական մի շարք ուղղություններ.

Բոլոր էքզիստենցիալիստների համար կյանքը և մահը բարձրագույն տրանսցենդենտ ռեալություն է, որը անվանում են «մահվան հումար կեցություն»: Մահը մարդկության իսկական կոչումն ու նպատակն է: Մահվան անխուսափելիության գիտակցումը սկզբում առաջ է բերում տագնապ, բայց տարեցտարի, ինչքան մոտենում է մարդու գոյության վերջը, տագնապն ավելի է վերածվում սարսափի: Մահվան հանդեպ ունեցած սարսափն է, որը մարդուն ցույց է

[1] Montaigne M. Essais. P., 1965, p. 41

տալիս նրա իրական մենակությունն ու անհատականությունը էքզիստենցիա-լիստները մահը դիտում են որպես մի հնարավորություն: Ըստ ֆրանսիացի փիլիսոփա Էմանուել Մունիեի՝ մահը ամենաանձնական, ամենաանպայման, միաժամանակ ամենաանհեթեթ հնարավորությունն է, որը միայն կյանքի ավարտին չի գալիս, նա ներկա է կյանքի յուրաքանչյուր պահի մեջ

Ըստ էքզիստենցիալիստների՝ միակ ճշմարտությունը անխուսափելի մահվան ճշմարտությունն է:

«Մահվան հարցը կարևորագույն տեղ է գրավում գրականության և արվեստի մարզերում,- գրում է Ալբերտ Նալչաջյանը - այն գրականությունը, որը խորությամբ չի վերլուծում մահվան հետ առնչվող բազմաթիվ հոգեբանական հարցերը, մարդկանց վարքագծի ու մտածելակերպի վրա նրա ունեցած ազդեցությունը, թուլացնում է իր ուժը, իրատեսական բնույթն ու հմայքը»:[2]

Ուշադրությունը կենտրոնացնելով դեպի մարդ արարածը՝ Վ. Քաչան բարոյա-փիլիսոփայական հայացքներում զուգակցում է ինտելեկտուալը ֆիզի-կական պաթոսի հետ: Վերածննդյան հումանիստների պես նա քննում է մարդու կենսաբանական կառուցվածքը, հոգեկան ներաշխարհը, մարդկային մտքի անսահմանությունը: «Մարդկային մարմինը կազմված է մի քանի լիտր արյու-նից, ջրից, հենված է տասնյակ ոսկորների վրա, ծածկված է մաշկով, կարգա-վորված է օրգանների կողմից՝ ստամոքս, սիրտ, բարձրացված է մածուցիկ նյութով, որը կոչվում է ուղեղ և որը նողկալի է:

Դուք երբեք ինձ չեք հավատացնի, որ այս ամենով հանդերձ մարդիկ ստեղծել են մի մեքենա, որը գնում է լուսին: Երբեք: Դա մեկ այլ բան է, դա հաստատ է»:[3]

Զուգահեռներ անցկացնելով կյանքի և մահվան, նորածնի և հարյուրամ-յա ծերունու միջև՝ նա ցույց է տալիս կյանքի բնականոն, համաչափ ընթացքը, գիտակցելով մահվան անխուսափելիությունը, ներկայացնում է փաստերի հեր-թականությունը ինքնակենսագրական տվյալների տեսքով. «Կյանքը հանդուր-ժելի է ուրիշների մահվան շնորհիվ: Մահը տոն է, ինչպես և ծնունդը: Ես ծնվել եմ 1928 թվականի ապրիլի 1-ին, Դամասկոսում: Դա տոն էր: Մի քանի տարի անց ես կմեռնեմ: Դա կլինի իմ տոնը: Վերջապես ես մի լուծում կունենամ, բայց ամբողջ կյանքի գնով»:[4]

Ծնունդը կյանքի սկիզբն է, իսկ մահը կյանքի վերջնական լուծումը:

---

[2] Նալչաջյան Ալ., Մահվան հոգեբանություն, Եր., 1992, էջ 6:
[3] Katcha V., Laissez mourir les autres, P, 1973, page 78, (թարգմ. հեղինակի)
[4] Նույն տեղում, էջ 11

Արվեստագետ-քաղաքացու իր դիրքորոշումով Քաչան ներկայացնում է մահվան տարբեր տեսարաններ: Սեփական կենսափորձը բավականին ծանրակշիռ ու լուրջ փաստարկ է համոզիչ նաև ուրիշների համար:

«Թողեք մեռնեն» էսսեում տեղ գտած դրվագները, մեջբերումները կապված են հեղինակի անձնական տպավորությունների, տրամադրության, բնավորության, կենսակերպի հետ:

Այսպես՝ էսսեում Վ. Քաչան նկարագրում է մահվան հետ առաջին պատահաբար հանդիպումը, երբ Բեյրութի փողոցներից մեկում կախաղան էին հանել երկու եղբոր սպանություն գործելու համար: Հետաքրքիր է, որ հեղինակը նկարագրում է ոչ թե իր տառապանքը՝ տեսնելով կենդանի մարդկանց կամաց-կամաց մոտեցող մահը, այլ մահացողների կեցվածքը: Այդ տպավորությունը նրան չի խանգարել նկատել, որ գործողությունը կատարվել է լուսաբացին, և այդ օրը, ըստ Վ. Քաչայի, մահվան հոմանիշը «լուսաբաց» էր:

Վ. Քաչան անդրադառնում է նաև մարդկության «առաջին տագնապին» և առաջին մահվան առաջին վկային Աբելին: Աստվածաշնչային այս հատվածին անդրադարձել է նաև Ժ. Պ. Սարտրը իր «Սատանան և Տեր Աստվածը» պիեսում: Նա գեղարվեստորեն նկարագրում է բնության մեջ, երկրի վրա գտնվող առաջին ընտանիքը, ինչպես են ճաշում և ինչպես է տեղի ունենում մարդկության մեջ առաջին տագնապը եղբայրասպանությունը: Դա անծանոթ երևույթ է ընտանիքի մյուս անդամների համար, քանի որ մինչ Աբելի մահը ոչ ոք չէր մահացել: Քաչան ասես վերաքննում է կրոնական, Աստվածաշնչային մեկնաբանությամբ մահվան թեմայի ավանդական և ավարտուն հիմքերը եզրակացնելով, որ դա հաստատված օրենք է բնության մեջ և պետք չէ երկնչել այն բանից, ինչից միևնույն է խուսափել չես կարող: Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանն ասում է. «մահը մերն է, մենք մահինը»:

«Մահվան գաղափարն է, որ ինձ լարված վիճակում է պահում:

Եթե այն գոյություն չունենար, ես այլևս չէի պայքարի: Ինչի՞ համար: Ես միայն ափսոսում եմ, որ նա չի հայտնվում ինչպես հղիությունը: Առասպելական, ապրելու ինքը վերջին ամիսները: Ա՜հ, եթե կարողանայինք կրել մեր մահը որովայնում երջանիկ իրադարձության սպասման մեջ»:[5]

Լավատեսորեն զուգահեռ անցկացնելով ծննդյան և մահվան միջև Վ. Քաչան միայն ափսոսում է, որ մահն էլ ծննդի նման այդքան գեղեցիկ, սպասումնալից չի հայտնվում մեր կյանքում: «Ես ներկա եմ գտնվել մի քանի ծնունդների ժամանակ և ամեն անգամ կարծում էի, որ դա երազ է: Մի կենդանի էակ, որը

---

[5] Նույն տեղում, էջ 32 – 33:

դուրս է գալիս մեկ այլ կենդանի էակից: Իսկ ինչո՞ւ մահացողը դուրս չգար իր սեփական մահվանից»:[6]

Նրա պատկերացմամբ մահը կյանքի դրսևորումներից մեկն է, ինչպես օրինակ՝ ծնունդը, երիտասարդությունը, ամուսնությունը, ծերությունը, նույնքան բնական ու օրինաչափ, որքան և մյուսները:

Ըստ էքզիստենցիալիստների՝ մահվան անխուսափելիության գիտակցումն առաջանում է այն ժամանակ, երբ անձն ունի հոգևոր զարգացման բարձր աստիճան: Սեփական մահվան փաստի գիտակցումը տարբերում է մարդուն կենդանուց: Հենց դա, այդ զգացումը, մարդու համար դառնում է սեփական կյանքի «կառուցման» հիմքերի հիմք: Դրա պատճառով էլ մարդու գիտակցած, ըմբռնած ու իմաստավորած կյանքը Մ. Հայդեգերը անվանում է «մահվան համար կեցություն»: Սարդն այն ժամանակ է հասուն դառնում, երբ հետին պլանում մշտապես արթուն է պահում մահվան գիտակցումը: «Ինչո՞ւ այս արտասուքները: Ինչո՞ւ այս ճիչերը: Թաղում են: Դա բոլորովին էլ բնական չէ: Եթե մահը բնական երևույթ է, ապա պետք չէ սգալ: Միթե՞ լալիս ենք, երբ փոխվում են եղանակները: Երբ ծառերը ծաղկում են կամ պտուղները հասունանում»:[7] Ալեքսանդր Թոփչյանը «Գիշատիչների խնջույքը» գրքի վերջաբանում գրում է. «Այստեղ արդեն Կայենը առաջին մահվան առաջին վկան և բույսը նույնանում են. երկուսն էլ ավարտի, վախճանի մասին ոչինչ չգիտեն, մեկը որ առաջին անգամն է տեսնում, մյուսը որ հիշողություն չունի, բույս է: Ծառը բախտավոր է նրանով, որ մոռանում է, թե քանի գարուն է ապրել, մինչդեռ մարդը հուշերի շտեմարան է»:[8]

Ուրիշի մահը կարող է խոր ազդեցություն գործել մյուս մարդկանց կյանքի ողջ հետագա ընթացքի վրա՝ նոր կողմնորոշում հաղորդելով նրանց գործունեության, հայացքների, մտածելակերպի զարգացմանը:

Վ. Քաչան իրեն միամիտ է համարում, կարծելով, որ հռչակավոր մարդիկ անմահ են լինում, բայց չէ՞ որ նրանք էլ են սովորական մահկանացուներ և մահը մի օր էլ կթակի նրանց դուռը:

Այնուամենայնիվ «մահը պետք չէ ընդունել որպես անդարմանելի մի բան»:[9]

Ըստ Քաչայի՝ անմահ մնալու ցանկությունը, տենչը կա յուրաքանչյուր մարդու հատկապես մեծ մտածողների, հանճարեղ մարդկանց մեջ: Անմահության հնարավորությանը հավատացել է ոչ միայն Վ. Քաչան: Այնպիսի հսկաներ,

---

[6] Նույն տեղում, էջ 11:
[7] Նույն տեղում, էջ 67:
[8] Քաչա Վ., Գիշատիչների խնջույքը, Եր., 1976, էջ 363 – 364:
[9] Քաչա Վ., Գիշատիչների խնջույքը, Եր., 1976, էջ 31:

ինչպիսիք են Ի. Ս. Բախը, Վ. Գյոթեն անմահությունն ընդունել են որպես իրական փաստ:

Անմահության գաղափարը, անհատականություններին անմահ տեսնելու ցանկությունը մշտապես ներկա է Քաչայի «Թողեք մեռնեն» էսսեում: Բայց մի՞թե մարդն ի վիճակի է հաղթահարել անվախճանի և վախճանի հակասությունը և հավերժորեն անմահանալ բնության մեջ:

Վ. Քաչայի այս դիրքորոշման մեջ արձագանքվում է նիցշեական «հավերժ վերադարձի» անհնարինության և «հավերժ կրկնության» գաղափարը:

Սակայն Վ. Քաչան իր սեփական ուրույն պատկերացումն է ստեղծել անմահության մասին: Նա սիրում է կյանքը և հավատում է մարդու անմահությանը, դա առաջացնում է լավատեսություն, լավ տրամադրություն. «Ես ընթերցում եմ Հյուգո, որը մահացած է»:[10]

Գրողը, ստեղծագործողը յուրաքանչյուր անհատի համար մահանում է այն ժամանակ, երբ անհատը վերջացնում է ստեղծագործության ընթերցումը «Ժյուլ Ռենառը մահացել է Վահե Քաչայի ձեռքերի վրա» կամ «Նա կմահանա հատորի վերջում»:

Գոյապաշտ գրողի էսսեում մահը ներկայանում է որպես մխիթարող երևույթ. «Մի վախեցիր մահվանից, իմ ընկեր: Մահվան մեջ ավելի քիչ ագրեսիվություն կա, քան կյանքի մեկ որպեում...»:[11]

Վ. Քաչան անդրադառնում է նաև իր մոր մահվանը, չցանկանալով խոսել այդ մասին և խորանալ մանրամասների մեջ. նա միայն հիշատակում է իր մոր պատրաստած ծիրանի մուրաբաները, որով մայրն անմահացել է իր հիշողության մեջ:

«Եվ դրանից հետո, ամեն անգամ, երբ ատամներիս տակ ծիրան եմ ճզմում, նրա պատկերը ցայտում է իմ աչքի առջև: Արդեն քսան տարի է, ինչ նա մահացել է: Նա քառասունչորս տարեկան է, իմ տարիքը»:[12]

Մահը կյանքի յուրաքանչյուր պահի մեջ գտնվող մի վիճակ է:

«Ոչնչի» դիմաց սարսափը մեզ զրկում է խոսելու կարողությունից: Նա առաջին անգամ դնում է կեցությունը էության դեմ հանդիման...»:[13]

Վ. Քաչան իր ամբողջ կյանքի ընթացքում ուսումնասիրել է առանձին անհատների, հոգեբանների, փիլիսոփաների տեսակետները, նույնիսկ հետևել ամսագրերում մահվան վերաբերյալ տպագրվող հայտարարություններին՝

---

[10] Նույն տեղում, էջ 73:
[11] Նույն տեղում, էջ 55:
[12] Նույն տեղում, էջ 74:
[13] Хайдеггер М., Время и бытье: статьи и выступления, М., 1993 с. 22-23.

հատկապես հուզվելով դրանցում հանդիպող դեռատի աղջիկների, երիտասարդ տղաների մահվան մասին տեղեկություններից:

Նշենք, որ այս միտքը եղել է դեռևս 17-րդ դարում. Մոլիերն էլ է կողմնակից եղել աշխարհը ըստ տարիքի «թողնել հեռանալու» մարդկանց հերթականությանը: Դոն Ժուանը համարձակորեն բացատրում է Սգանարելին. «Պետք է, որ ամեն մեկն իր հերթն ունենա և ես կատաղում եմ, տեսնելով, որ հայրերն իրենց որդիների չափ են ապրում»:[14]

Վ. Քաչան միշտ խոսում է մահվան մասին, բայց սխալ կլիներ նրան համարել մահվան երգիչ, քանի որ նա մահը չի դիտում որպես չարագուշակ երևույթ, այլ «մահը կյանքի մարսողությունն է»,[15] կյանքի տրամաբանական շարունակությունը, կախարդական ավարտը: Ելնելով մարդասիրական և կենսաբանական նկատառումներից նա գտնում է, որ մարդը երջանիկ է, որ մահանում է, որ արժան է մահվան.

«Ես գտնում եմ անարդար, որ մի խճաքարն ավել է ապրում, քան ես:

Բայց ես ինձ մխիթարում եմ, ասելով, որ խճաքարը արժան չէ մահվան...»:[16]

Նշենք, որ Հայդեգերի համար մահանալը վերջին հնարավորությունն է, իսկ Սարտրի համար բոլոր հնարավորությունների վերջը: Քաչայի համար էլ մահը մի հնարավորություն է, որն իմաստ ու նպատակ է հաղորդում մեր կյանքին:

Վահե Քաչան փնտրում է այն, ինչ կարող է սովորեցնել հանգիստ մեռնել և հանգիստ ապրել այս «մտահոգության» աշխարհում: Եվ դա պետք է սկսել սովորեցնել վաղ հասակից՝ սերմանելով մանկահասակ երեխաների մեջ մահվան, որպես բնականոն երևույթի մասին գաղափարը: «Խոսում են, որ դպրոցներում անցկացնելու են սեռական դասընթացներ: Դա նորմալ է:

Բայց պետք է մտածել մահվան գաղափարն ուսուցանելու մասին, ոչ որպես տխուր երևույթ և կապված միայն եկեղեցու հետ և այլն: Բնական ձևով, այլ ոչ որպես հուզումնալից երևույթի: Կանոններ հաստատել լաց չլինել, երբ բարեկամ են կորցնում, քանի որ մահը կյանքի դրվածքի մի մասն է կազմում, դա է ամբողջությունը: Գեղեցիկ ֆիլմ, որ ոչ մի կինոյի հսկիչ չի հուշելու «վերջ» բառը: Յուրաքանչյուր ոք իր հետ տանում է իր կախյալ վիճակը:

Ուրեմն գրողը տանի: Ձեզ տալիս են կախարդական խաղալիք և դուք ողբում եք...

---

[14] Ֆրանսիական կլասիցիզմ, եր., 1982, էջ 219:
[15] Katcha V., Laissez mourir les autres. P., 1973, page 67.
[16] Նույն տեղում, էջ 83:

Կան մարդիկ, ովքեր արժան չեն մահանալուն»:[17]

Վ. Քաչան եզրակացնում է, որ մահը կյանքի ամբողջությունն է կազմում, քանի որ բնության մեջ գոյություն չունի որևէ երևույթ, որն ունենա սկիզբ և չունենա վերջ:

Խոսքի նշանակության ընդգծման, միտքն ավելի ցայտուն դարձնելու նպատակով, էսսեի վերջում Վ. Քաչան օգտագործել է բառական կրկնությունը. «Մահը, մահը, մահը, մահը, մահը»:

Այս դեպքում բառական կրկնությունը ուժեղացնում է հուզական բովանդակությունը և ընթերցողը պատկերացնում է գրողի հոգեկեցվածքը: Սա մի միջոց է, որ կարծես ամփոփում է ամբողջ ստեղծագործության իմաստը:

Կրկնությունից հետո նա կիրառում է ոճաբանական այլ հնարք բառական հակադրություն, որը նորից կրկնվում է և որոշիչ հոդի օգտագործմամբ դառնում ավելի որոշակի, հայտնի: Նա հակադրում է «մահ» բառը «սեր» բառի հետ.

(«La mort, la mort, la mort, la mort, la mort. Excusez-moi, l'amour, l'amour, l'amour, l'amour, l'amour, l'amour, l'amour, l'amour, l'amour, l'amour.

La plus belle autoroute pour arriver au seuil des grandes vacances»).

«Մահը, մահը, մահը, մահը, մահը, կներեք ինձ, սերը, սերը, սերը, սերը, սերը, սերը, սերը, սերը, սերը, սերը:

Երկար արձակուրդների շեմին հասնելու ամենալավ ավտոմայրուղին»:[18]

Մեր ուշադրությունը կենտրոնացնելով հակադրվող բառերի վրա հեղինակն ավելի է ընդգծում դրանց տարբերությունը և համահնչյունությունը:

Միանգամայն հասկանալի է, որ Վահե Քաչայի «Թողեք մեռնեն» էսսեն գոյության փիլիսոփայության և էքզիստենցիալիստական գրականության լավագույն օրինակներից է:

The concept of life and death in Vahe Khacha's "Let them die" essay

This article is devoted to the concept of death discussed in all the works of Vahe Khacha which is summed up in "et them die multifaceted essay

In this work the author discusses the concept of life and death, he gives different approaches proving them on life examples. For the existentialist author the death is presented as an inspiring phenomenon on one hand and an irrevocable loss on the other hand.

Based on the thesis of existentialism he shows his specific humanistic comprehension of both life and death

Vahe Kacha's "Let them die" essay is one of the best examples of philosophy of existence and literature of existentialism.

---

[17] Նույն տեղում, էջ 84:
[18] Նույն տեղում, էջ 85: